ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 177 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին և 2.2-րդ մասերի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի «2026 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների օրեր սահմանելու մասին» թիվ 67-Ա որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունը նշանակել 2026 թվականի նոյեմբերի 29-ին:
2. Առաջարկել Նոյեմբերյան համայնքի ղեկավարին.
   օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետին.
   ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ:

Հայաստանի Հանրապետության

Տավուշի մարզպետ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-08-17 10:42:04 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ք. Իջևան

2026 թվականի օգոստոսի 17